

## ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ<sup>1)</sup>

ԴՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ)

### V

Վերևը դրած այր և կին բոշայի առանձնակի նկարագրութիւնից կարծեմ ընթերցողը քիչ թէ շատ գաղափար կազմեց նոցա փոխադարձ յարաբերութեան մասին, որ խիստ բնորոշ կերպով արտայայտում է այն խոստումով, որ տալիս է ամուսնանալու ժամանակ հարսնացուն իւր փեսացուին. երբ մօտենում է պասկի ժամը, ինչպէս պատմում են, փեսացուն մտնում և պահում է թոներում, իսկ հարսը մօտենալով նորան մի քանի անգամ համոզողական ոճով խնդրում է դուրս գալ թաքստեան տեղից. Շուտ էկօ, տոտիկներիդի մեռնիմ, դուս էկօ, մուրա՞յ, կուրամ՝ քեզի կը պահեմ։ (Դուրս եկ, ոտներիդ մեռնեմ, ես մուրա՞յ, կուրամ՝ քեզ կը պահեմ)։ Այդ խոսառումը ստանալով իւր նշանածից, փեսան դուրս է զալիս և դնում պսակւելու։ Քանի որ աղջիկ է, բոշան ազատ է, չի շրջում ապրուստ ժողովելու, ապրում է հօր տանը, կատարելով միայն ընտանեկան թեթև գործեր. նրա երեսը բաց է, քողով չի ծածկած, նա աղատ է, խօսելը և մարդկանց երեւալը նորան չեն արգելում։ Քայց երբ նա նշանեց, մանաւանդ երբ նորա շրթումքը հնչեց յիշեալ անխուսափելի խոստումը, որով նա դառնում է մի նոր տան անդա՞յ, որով

1) Տես «Ամուրճ» № 7—8:

այդ տան կարիքներն ու հոգսերը հոգացողն ու մատակարարողն է դառնում, զրկուում է այն ազատ, անհախ դրութիւնից, որ վայելում էր իւր հօր տանը: Նա իրաւունք չոնի իւր փեսայի տան մեծերի հետ խօսելու մի առժամանակ, պէտք է երեսը քողով ծածկէ մինչև որ սկսի իւր շրջակացութիւնը, մինչև որ ձեռքն է առնում աստանդական մահակը: Սկզբներում ի հարկէ նա լինում է ամաչկոտ և անհամարձակ, այդ պատճառով նորան առաջնորդում է իրրե մենուոր մի փորձաւու և հասակաւոր կին. իսկ հետզհետէ վարժելով իւր պարապմունքի մէջ, դառնում է իւր տան պահպանողը: Ցղութեան վերջին ամիսներին սովորաբար բոշա-կանայք դադարում են շրջելուց և տանն են մնում. թէև սակաւ չի պատահում, որ նոքա ճանապարհին կամ հեռու օտարութեան մէջ ծնելով, վերադարձին իրանց վաստակի հետ մի զաւակ էլ պարզէ են բերում իրանց ամուսիններին:

Բոշա-կինը իւր այդ դրութեամբ, իրեւ ընտանիքի առաջաւոր ոյժ, իրրե նորա խոշոր հոգսերի հոգացող, հասկանալի է, թանկ էլ պիտի զնահատուի: Ամեն մի բոշա-փեսացու պարաւոր է մի պատկառելի դրամագլուխ վճարել իւր հարանցուի ծնողաց: Այդ դրամագլուխը, որ հատէմասի (համաձայնութիւն, այս ասել) է կուտամ, Ախալքալաքի բոշաների որոշմամբ 115 բուրլի է ներկայումս: Առաջ դա աւելի շատ է եղել, բայց անցեալ տարուց բոշա համայնքը կարգադրել է գորանից աւելի երբէք ոչ պահանջել, ոչ էլ վճարել: Այդ համեմատաբար մեծ գումարը նոքա առանձին դժւարութեամբ չեն վճարում: Դէմ Ախալքալաքի բոշաները համեմատելով նոյն աեղի հայ զիւղացիների հետ, որոնց մօտ նոցնալէս այդ սովորութիւնը կայ, նոցանից շատ աւելի և որ զիսաւորն է, շատ էլ զիւրութեամբ են վճարում: Այդ և ուրիշ մի քանի հանդամանքներ ցոյց են տալիս, որ բոշաները խեղճ, համարեաւ աղքատ ասլրելով, աշխատածը յետ են զցում ևնեղ օրւայ հոմարն, թէև նոքա աշխատում են ամեն կերպ ցոյց տաւ, թէ նոքա ամեն բանի կարօտ յետնեալ աղքատներ են.—Մի զուար բոշայական յատկութիւն, որ ի հարիէ ոչոքի ըստ պիտի զարմացնէ:

Այդքան վազ ստանալով աղջկայ ծնողները խիստ աղքատիկ օժիտ են ստալիս իրանց աղջկան. մի զիմացիուն և ընտիր մահալ,

մի մեծ կաշեաց տուպրակ, իւր հազի շորերը, երբեմն նաև մի զոյգ նոր, հասարակ կտորից կարած շոր, ահա բոշակ աղջկակ իւր հօր տանից տարած օժիտը, որոնք և նորա ամենաանհրաժեշտ իրեն են:

Բոշաների հարսանիքը թէև զուրկ է արտաքին շքեղութիւնից, բայց շատ հետաքրքրելի է իւր օտարոտի ծիսակատարութիւններով: Առաստ օդին, որ բոշաների ամենասիրելի խմիչքն է, միջոց է տալիս բոշապին անչափ արբելու և ուրախանալու: Այդ առանց այն էլ մշտագւարձ ժողովուրդը անձնատուր եղած ոգելից խմիչքի ազդեցութեան, գոռում, գոշում, երգում, պարում, սրախօսում, զւարձանում է անընդհատ: Հարսանիքին մասնակցում են առանց բացառութեան բոլոր բոշաները: Հարեան, բարեկամ, կամ ազգական վինտոող չը կայ. հասակաւոր, մեծ, փոքր, երեխաց, կին, աղջիկ և հարս, բոլորը անխտիր մասնակցում են այլտեղ: Խնչպէս ուրախութիւնը, նոյնպէս էլ վիշտը բոլորի համար է, ընդհանուր է. բոշանինչպէս գիտէ ուրախանալ իւր ընկերոջ հետ, նոյնպէս էլ գիտէ վշտակցել նորան: Լացը կամ խնդումը, վիշտը կամ բերկրանքը, բոշաների մէջ անհատից անցնում է ընդհանուրին և փոխադարձ:

Պէտք է նկատել, որ բոշաները իրանց որդոց ամուսնացնում են շատ մատաղահաս. սովորաբար 15 – 17 տարեկան տղան և 12 – 15 տարեկան աղջիկը արդէն հասուն և ամուսնութեան համապատասխան են համարում: Այդ վաղահաս ամուսնութիւնը պէտք է մեծ մասամբ վերագրել բոշաների վերին աստիճանի բարեբարոյ կեանքին, որ գերազանցում է բոլոր հարեւան ազգերից: Յիշելու արժանի է այն աչքի ընկնող երեսոյթը, որ բոշաները իրանց հայ անւանելով<sup>1)</sup> յաճախելով հայոց եկեղեցի, սերտ կրօնական կապերով կապւած լինելով հայոց հետ, միշտ խորշում են հայի հետ ամուսնանալուց, թէև վերջինս էլ պակաս չի խորշում և արհամարհում առաջինին: Խնչպէս տեղեկացանք իրանց բոշաներից, Ասալքալաք գաղթելու օրից, այսինքն 1828-ից մինչև այսօր միայն մի անգամ է տեղի ունեցել

<sup>1)</sup> Եթէ բոշալին հարցնելու վնինք թէնա ինչ ազգութեան է պատկանում, նա առանց տաստանմելու կը պատասխանի –հայ, բոշակերէն հալին նա անւանում է՝ ոկալարաւո, իսկ իրան՝ ոլոմա—ալատեղ ահա նա կարծես անդիտա՛յցաբար վիշտմ է իւր օտար ծաղումը և անունը.

այլպիսի մի ամուսնութիւն հայ աղջկայ և բոշայ տղամարդու մէջ, չը նայելով որ բոշաներին խիստ զրդող պատճառներ կան այլպիսի խառն ամուսնութեան դիմելու: Բոշաները վերին աստիճանի սակաւաթիւ և սերտ համայնական կապերով ասլով ժողովուրդ են. զբականապէս կարելի է ասել, որ նոցա մէջ կանաչք աւելի քիչ են, քան տղամարդիկ և որովհետև նոքա զբացի հայերի կամ այլ ազգութիւնների հետ չեն ամուսնանում, ուստի սովորած են մօտիկ արիւնակից ազգականների հետ խնամէանալու, որը պէտք է ասած հակառակ եկեղեցու օրինաց պահանջներին՝ նոքա միշտ կարողանում են դիւրութեամբ ծածկել, և ամուսնութիւնը գլուխ բերել շնորհիւ այն հանգամանքի, որ հայ քահանաները ի մօտոց չեն ճանաչում նոցա, ուստի և յաճախ խաբւելով պակում են արիւնակից ազգականներին: Զը նայելով որ մեր ձեռքում չունենք բուն ստատիստիկական տեղեկութիւններ, բայց մեր քաղած տեղեկութիւններից կարելի է եղբակացնել, որ բոշաների աճելութիւնը աւելի յետ է հայերից, որը անտարակոյս պէտք է վերագրել նոցա վարած ողորմի ասլուստին և գուցէ արիւնակից ամուսնութիւններին:

## VI

**Ի՞նչ կասէք** մի այնպիսի ժողովրդի համար, որ թէև տգէտ, թէև սակաւաթիւ, թէև բաժան-բաժան եղած և ցրւած այս ու այն կողմը, թէև զուրկ ինքնուրոցն անկախ զրութիւնից, զուրկ այնպիսի անհրաժեշտ տնտեսական պայմաններից, առանց որոնց ոչնչանում, կորչում է իւրաքանչիւր անհառ և ժողովուրդ իրանից թւով շատ և կուլտուրայով բարձր ժողովրդի մէջ, չը նայելով այդ ամենաաննպաստ պայմաններին՝ բոշան կարծես մի իմաստուն ժողովրդի զիտակցութեամբ շարունակում է իւր գոյութեան խուլ և տոկուն կռիւը: Մի պատառաբոյծ մնկի նման նա նստած մի ծառի բնին, հանգիստ ապրում է նորա հաշեով առանց թուլութեան կամ հիւանդութեան նշաններ երեացնելու:

Թէև կիսակիրթ ազգերի մէջ քիչ չեն մարդիկ, որոնց մէջ չափազանց վառ է ազատասիրութեան ողին, բայց դա պայմանաւորւմ է բնակած երկրի կամ լեռների ներկայացրած բնական յարմարու-

թիւններով, կամ ամբողջ ցեղի սերտ և անբաժան միութեամբ, որպնցից եթէ զրկւեն, անմիջապէս կ'ընձւեն, մինչդեռ՝ դոցա համեմատութեամբ աւելի զարժանալի, առաւել օտարոտի և բոշայի ազատասիրութիւնը, որը ոչ ոք չի կարող նորանից խլել. նա իւր ազատութիւնը ոչ թէ անմատչելի լեռների բնական ամրութիւնների մէջ և որոնում, ոչ թէ յանդուդն արշաւանքներով կամ հերոսական քաջութեամբ է պահպանում իւր ազատութիւնը, որը նորա համար ամեն բանից թանկ է, այլ այնպէս, կարծես ամեն տեղ, ամեն երկրում նա ազատ է, որ բզիսում է բոշայի ամբողջ էութիւնից, նորա հասարակական կազմակերպութիւնից, և որ գլխաւորն է, նորա կենցաղավարութեան և ապրուստի տարապայման բնաւորութիւնից:

Բոշան ապրում է ինքը իւր մէջ. չափազանց կղզիացած է նորա դրութիւնը շրջապատող ազգերի նկատմամբ, նա համարեա բողոքովին կտրւած է արտաքին աշխարհից. մի օր նա կ'երեալ սորա կամ նորա առջե, կը խնդրէ, կը պահանջէ իւր հացը, իւր ապրուստը. Այս է նորա ունեցած շփումը դրսի աշխարհի հետ, ուրիշ շատ հազւագիւտ դէպքերում նա գործ կարող է ունենալ օտար հասարակութեան հետ. Եթէ նորան խանգարող չը լինի, նա գուցէ մոռանայ էլ թէ իրանից զատ ազգ, կամ ժողովուրդ գոյութիւն ունի. նա նոցա գոյութիւնը ճանաչում է նոցանից ստացած փրշ-րանքներով, ուրիշ կերպ նա չի տեսնում, չի թափանցում իւր շուրջը ապրող հարեւան ազգերի կեանքը և չի թողնում, որ իւր հասարակութեանը չը պատկանող միօտար անհատի հետաքրքիր աչքերը դիտեն իւր ներքին մի օրինակ կեանքի մանրամասնութիւնները. Երեխայի թեթևամտութեան և գւարճասիրութեան հետ, նա ունի իւր համայնքի կեանքին վերաբերող խիստ ծածկա-մուութիւն ու գաղտնապահութիւն. Օտարի ներկայութեամբ նա գործ է ածում իրան միայն հասկանալի մի լեզու, որ իւր պապերի լեզվի մացորդն է, Հրէայի տոկունութեան հետ, նա ունի շինացու ծածկապահութիւն, ուստի ամեն հնարաւոր միջոց նա ձեռ. կ'առնէ ծածկելու, վարագուրելու իւր թէ հասարակական կազմակերպու-թիւնը և թէ ընտանեկան կեանքը. այդ պատճառով բոշային ամեն ոք ծանօթ լինելով, համարեա ոչնք չի ճանաչում իսկապէս:

Բոշաները իրանց բոլոր գործերը կարգադրում և վերջացնում են իրանք իրանք, առանց օտարի միջնորդութեան. դեռ ոչ մի դատաւորի ականջին բոշայի գանգատ չի հասել, ոչ մի դատարան բոշան գօժարակամ չի այցելել, ոչ մի դատարանի սեմից բոշայի ոտը չի անցկացել, ոչ մի աքսորավայր բոշա-աքսորականի երես չի տեսել դեռ ոչ մի բոշայ չի մեղադրւած քրէական յանցանքի մէջ: Ահա բոշայի ամենապիշտ, ամենակատարեալ կողմերը, որոնք կարող են նախանձ յարուցանել նոյն իսկ նոցանից շատ աւելի քաղաքակիրթ ազգերի մէջ: Այդ յատկութիւններին պէտք է մեծ մասամբ վերադրել բոշա-ների ինքնադոյց կացութիւնը: Օտար հասարակութեանը ոչ մի հանգամանկում մազաշափ վնաս չի տալիս բոշան. չի գողանում, չի թալանում, չի կռւում նորա հետ կռիւ պատահում է իրանց բոշաների մէջ, որը հայհոյանքից և տուր ու դմբոցից դէնը չի անցնում: Բոշան գէնք չունի և որովհետեւ մեր դիտեցածներից դեռ ոչ մինը մեղադրւած չէ սպանութեան և առհասարակ քրէական յանցանքի մէջ, ուստի չենք վստահանում ասելու՝ թէ բոշան ընդունակ է արդեօք որ և է խոշոր յանցանք գործելու կամ սպանելու: Որովհետեւ նա հասարակութեան խաղաղութիւնը երբէք խանգարած չէ, ուստի նա ոչոքի, նաև կառավարութեան ուշադրութիւնը գրաւած չէ իւր վերայ: Նա, եթէ չը լիշենք դժւար հարկառութիւնը, կառավարութեանը ոչ մի հոգս չի պատճառում իւր հանգիստ և խաղաղ նիստ ու կացով:

Ի հարկէ չի կարելի երեակալել մի ժողովուրդ, որ որ և է ներքին նոյն իսկ թեթև խռովութիւններ չունենար, որոնց դադարացնելու, և խռովութիւնը վերացնելու համար անհրաժեշտ պիտի լինեն կամ օրէնք և կամ հեղինակաւոր ազդեցիկ անձնաւորութիւններ: Այս-պէս էլ բոշաները թէև փոքրիկ, բայց իրրեւ մի ինքնուրոյն և նեղ համայնական կապերով ապրող նահապետական ժողովուրդ, իւր թէ արտաքին և թէ ներքին գործերը կառավարող ներկայացուցիչ ունի որ կոչւում է աթոռակալ:

## VII

Աթոռակալին ընտրում են իրանք-բոշաները, ծեր և պատկառելի անձերից առաւել արժանաւորին՝ և մի պահպանիչով հաստատում է նորան հայ քահանան: Աթոռակալը բոշա-համանքի մէջ մեծ պատիւ է վայելում: բոլոր հասարակական գործերի հոգացողը, քննողը և կարգադրողը աթոռակալն է. մասնաւոր վէճերը, կուները մանաւանդ ծեծը, որ խիստ սովորական է իրանց-բոշաների մէջ, դատում և վերջացնում է նոյն աթոռակալը. այդ է պատճառը, որ բոշաները համարեա չեն զիմում պաշտօնական դատարանը իրանց վէճերը քննելու համար: Հարսանիքի և այլ հասարակական հանդէսների ժամանակ նա քահանավից յետոց երիրորդ տեղն է բռնում: Նոյն խկ շատ մասնաւոր, զուտ ընտանեկան բնաւորութիւն կրող գործեր ևս, երբ հասարակութեան այս կամ այն անդամի համար հարկաւոր է մարմնաւոր կամ հոգևոր իշխանութեան զիմել առաջ է անցնում աթոռակալը. վկայել թէ նշանւող աղջիկն ու տղան ազգականներ չեն, նշանադրութիւն կամ հարսանիք դլուխ բերել պսակի հրաման կամ թոյլատութիւն ստանալ և այլ զանազան մեծ և փոքր գործեր կատարել բոլոր ժողովրդի կողմից, ահա այս է նորա պաշտօնը: Հասկանալի է, որ այդ բոլոր գործերը նա կատարում է առանց որ և է վարձարութեան, այլ ձրի: Այդ բոլորի փոխարէն, ինչպէս ասացինք, նա վայելում է մեծ յարգանք և պատիւ. նրա խօսքը բոլոր հասարակութիւնից պատգամի տեղ է ընդունում: և եթէ աթոռակալը մի քիչ խելացի և ազդեցիկ մարդ է, խիսկան իշխանի դեր է կատարում նոցա մէջ:

Խնչպէս տեսնում է ընթերցողը, «աթոռակալ»-ը մի տեսակ ընտրողական ցեղապետի նշանակութիւն ունի, որ հարկաւ, նոցա հնագոյն առաջնորդ—ցեղապետների նսեմ մնացորդն է, ինչպէս շէմիս քրդերի մէջ:

Առաջ, քանի որ բոշաները քրիստոնեայ չէին, գուցէ այժմն իսկ մեզ անծանօթ բոշա ցեղերի աթոռակալին քահանան ի հարկի. չեր կարող հաստատել: Դա առաջացել է քրիստոնէութիւն ընդունած օրից: Այս հանգամանքը մեզ առիթ է տալիս մատնանիշ անելու բոշաների բարեպաշտութիւնը առհասարակ և այն նշանակութիւնը

որ նոքա տալիս են հայ հոգևորականներին, նոցա միջոցով հաստատել տալով իրանց աթոռակալին։ Հոգևորականներին նոքա շատ չարգում և պատռում են և նոցա վերաբերմամբ համեմատաբար առատաձեռն են։ Տղամարդկանցից առաւել բարեպաշտ և ժամանել են բոշականալը։

Զլ նայելով այդ հանդասմանքին՝ հասկանալի է, մասամբ հոգևորականութեան անուշադրութիւնից, մասամբ իրանց բոշաների անհետաքրքրութիւնից և տգիտութիւնից նոցա կրօնական հասկացողութիւնները չափազանց սահմանափակ և վայր ի վերոյ են։ Բոշանմիայն զիտէ «Խասուս-Քրիստոսից անունը, առանց սակայն մի որոշ հասկացողութեան կամ գաղափարի որ արտայացում է այդ անունը, զիտէ նոյնպէս անորոշ «Մարիկ», Մայր-Աստւածածնից անունը, զիտէ «Հայ-քրիստոնից» պիտ խաչ հանել երեսը և մի քանի բառեր «Հայր-մերից»...»

Ահա այս է նորա կրօնական հասկացողութիւնների ամբողջ պաշարը։ Սորանից դորս նա ոչ իւր կրօնի, ոչ իւր եկեղեցու և նորա առանձնապատկութիւնների և ոչ էլ նորա դաւանաբանական տարբերութիւնների մասին որ և է հասկացողութիւն կամ գաղափար ունի։ Մի հարցման միայն նա կը պատասխանի դիւրութեամբ, կարծես ուղելով հասկացնել, թէ քո բոլոր հարցերիդ պատասխանը որոնիր այդ բառի պարունակութեան մէջ՝ ես հայեմ։ և այդ բառով, այդ լակոնական պատասխանով նա հասկանում է իւր կրօնը, իւր դաւանութիւնը, իւր եկեղեցին, այլ և իւր աղջութիւնը ամբողջապէս կարծում ենք, որ բոշաները միշտ հաւատարիմ կը մնան իրանց կրօնին, եթէ աչքի առաջ ունենալու լինենք բոշայի բարեպաշտութիւնը և իւրաքանչիւր նորութիւնից խորշիլը։ Կետաքը բարեպաշտութիւնը է իմանալ թէ Տաճկա-Հայաստանում բողոքական և կաթոլիկ միսիօնարները բոշաներին էլ քարոզում են և ինչքան յաջողութիւն են գտնում նոցա քարոզելում։

Դիւրին է եղբակացնել, որ բոշան իւր կրօնական աղքատիկ հասկացողութիւնների պակասը պիտի լրացնէր սնուտիտպաշտութիւնով և նախապաշարմունքով, որ շատ յատուկ է զարգացման ստորասարհանի վերաց կանդնած թուլամիտ և տգէտ ժողովրդներին Բայց իրօք այդպէս չէ։ Հետաքրքրական է այն խնդիրը, թէ ի՞նչ պատ-

մական նպաստառիթ պայմաններ թելաղբել են բոշաներին քրիստոնէութիւն ընդունելու, որովհետեւ բոշան անընդունակ է էապէս ըմբռնելու քրիստոնէութիւնը, ուստի անհաւանական է ենթաղբել թէ քրիստոնէութիւնը նորանից վերացրել է մնատիապաշտութիւնը. որը չի կարողացել վերացնել քաղաքակրթութիւնով բոշայից շատ աւելի բարձր հայ ազգի միջից:

Այսպէս թէ այնպէս իրողութիւնն այն է, որ բոշան աւելի քիչ նախապաշարմունք ունի, աւելի սակաւ մնատիապաշտ է, քան հայը և գուցէ ունեցածն էլ ըստ մեծի մասին նա ընդունել է քրիստոնէութեան հետ հայից:

Մի աչքի ընկնող երևոյթ էլ այն է, որ բոշաները ռւխտ գնալ չը գիտն համարեն. մինչդեռ թուրք, քուրդ, նոյն իսկ եղիդ կարելի է տեսնել հայոց այս կամ այն սրբավայրին ուստի գնացած, բոշաները այդպիսի տեղեր շատ սակաւ է պատահում որ յաճախեն:

Սակայն ինչպէս կրօնական հասկացողութիւնների պաշարը, նոյնպէս և զանազան նախապաշարմունքների սակաւութիւնը և ուխտագնացութեան բացակայութիւնը մեզ չը պիտի զարմացնեն. բոշան բարդութիւն չի սիրում, նորա միտքը զանազան բարդ կրօնական և փիլիսոփայական, նոյնպէս և ցնորամիտ նախապաշարմունքներ լրմբռնելու անընդունակ է. նա միանդամայն աւելորդ է համարում իւր միտքը ծանրաբեռնել այդպիսի աւելորդութիւններով. բոշայի մտաւոր կեանքի հիմնաւոր թելը՝ պարզութիւնն է, թեթև, դիւրը ըմբռնելի, սակաւ մտաւոր ճիգ պահանջող գաղափարներ, որոնք դիւրութեամբ պահում են լիշտութեան մէջ: Մենք այսպէս ենք բացատրում այդ երևոյթները:

### VIII

Բոշաների նիստ ու կացը անմաքուր, պարզ և հասարակ է: Բոշայի խրճիթը, որ նոյն իսկ անւանի հարուստների մէջ կատարեալ աղքատութեան կերպարանք է կրում, իւր աիրոջ անընչափի թութեան, անփառամոլութեան ճշգրիտ պատկերն է: Նորա խրճիթը մտնելով, որ սովորաբար բաղկացած է բակից, գոմից և տանից, որտեղ քնում և ճաշում են ըստ մեծի մասին, նոյնպէս և օդայից, որ գոմի մի մասն է ծակ տախտակներով միայն նրանից բաժանւած,

որ այնտեղից ստունայ իւր տաքութիւնը, այդ խրճիթում կը տեսնէք մի թռնիր, որ ձմեռը գործ է ածոււմ իբրև վառարան և քուրս ու մի քանի կաւեայ ամաններ—«թղուղներ» և «կմուճներ», մի անկիւնում դարսած հնոտիք և կապերտների կտորտանկք, որ անկողնի և նստաշորի տեղեն ծառալում, և մի փայտեայ «արք»<sup>1)</sup>:

Տան միւս անկիւնը, զոմ կոչւածը, կապած է լինում բոշայի անբաժան ընկերը, հլու աւանակը, որը նորա թափառաշրջիկ երթեւկութեան ընկերն ու նորա թեթև հարստութեան տեղից տեղ փոխադրողն է: Աերեք մենք յիշեցինք թէ էշը բ'նչ արժեք և պատիւ ունի բոշանների աչքում: Ի դէպ, այսուղ զնում ենք մի անեկդոտի բնաւորութիւն կրող պատմութիւն, որ ցոյց է տալիս թէ բոշանները բ'նչ տեղ են յառկացնում իրանց միակ սիրելի կենդանուն: Բոշանները խնդիրով դիմում են Կարապետ սրբազանին և նիւթական, կենդանի օրինակով հասկացնելու համար նորա հզօրութիւնը և իրանց անզօրութիւնը, բերում են հետեւալ համեմատութիւնը. Հոգմոր տէր, տուն օր կաս, իտի մեր ազգ-էշն ես. մենք օր կանք, քու պոչիտ տկի ճանճերն ենք: Ուզենաս սխմես սատկեցնես կը, ուզենաս բաց թողնես, մեզի կ'ազատես կը:

Եւ շատ հասկանալի է այդ յարգանքի պատճառները որ նոքատածում են դէպի անաստունը: Խնչպէս որ առանց եզների երկրագործ չի կարող լինել ինչպէս որ առանց մզրախի քուրդը մի խղճալի արարած է, այնպէս էլ բոշան առանց իշի մի անզէն զինուրի է նման: Ամենասաղքատ բոշան էլ մի հատ էշ պիտի ունենայ, իսկ քիչ թէ շատ աչքի ընկնողը մի քանիսն է ունենում: Ումանք, որոնք արդէն քիչ թէ շատ հաստատաբնակ են դարձել, սկսել են ձիեր և պահել. սովորաբար էդ ձի են պահում, որոնց խառնելով էշերի հետ, թանգ զնահատող ընտիր ջորիններ են առաջացնում: Բոշանների պարապմունքների թւում մենք մոռացանք յիշելու, որ էշ, ձի և ջորի ճանաչելու, նոցա հիւանդութիւնները բժշկելու և կոտելու մէջ բոշանները խիստ հռչակւած և հմուտ վարպետներ են:

<sup>1)</sup> Սարք կոչում է այն գործիքը, որի վրաէ մաղ են գործում, Դա մի փատեալ քառակուսի է լար և նման ալն գործիքին, որի վրաէ օրիորդաց ուսումնաբաններում ասեղնագործում են—«քարկեալ կոչածը»:

Բոշաները հագնում են այն ժողովրդի հագուստը, որի մէջ ապրում են և խիստ ճկունութիւն են ցոյց տալիս ընդունելու այն ժողովրդի հագուստը և լեզուն, որի հետ ամենամերձ յարաբերութիւն ունին:

Նոքա խօսում են մեր գաւառական բարբառներով. թէև անսխալ, բայց մի առանձին արտասանութիւնով և շեշտով, որ անմիջապէս ծանօթ մարդու ականջին է դիպչում: Եթէ որ և է զաղտնի բան է ուզում խօսել բոշան իւր ընկերոջ հետ, նա գործ է ածում բոշայերէն լեզու, որ նոցա հին, մայրենի լեզ-ի մնացորդն է: Այդ լեզուն արդէն զործածութիւնից դուրս է եկել և համարեա մոռացութեան աստիճանին է հասել, այնպէս որ երիտասարդներից ումանք համարեա չը գիտեն այդ լեզուն: Նորա բառերի մեծագոյն մասը մոռացւել է արդէն և մնացել է միայն ամենազործածական մասը, որի պակասը բոշաները լրացնում են հայ և թուրք բառերով: Հենց մնացածն էլ այնքան խախուսո է, որ, ինչպէս կը նկատէ ընթերցողը ներքեւը դրած օրինակից, նրա բայերը կորցրել են իրանց խոնարհման ինքնուրոյն ձեւ և խօսարհւում են հայոց բայերի պէտ:

Ահա, ստորև դնում ենք երեք տուն բոշայերէն «խաղ», որոնցից մինը ուստա հանէսի և միւսը հռչակաւոր ուստա Վանօ-ի ասածներիցն է (երկուան էլ բոշա-երգիչ-աշուղներ են):

## I

Հանէս օղլին՝ պակրեց լոմ եմ ուշաւեցէք տլարիս:

— Հանէսի որդին ասաց՝ բոշա եմ խօսացէք անունս

Ակմը կայէն, չտար կայէն, աթ մը կայէն ակ կայէն

մէկ ժամանակ, չորս ժամանակ, հինգ ժամանակ, մէկ (ամեն) ժամանակ:

Լոմ մը վեսաց ֆենար, սաւը սընքէր պակրածս

բոշա մի նստած լինէր ապառեղ հիմնովին հասկանար ասածս

Ակ մը կայէն, չտուր կայէն և այլն <sup>1)</sup>,

մէկ ժամանակ, չորս ժամանակ և ազն:

Վեսողները կամ նա ջան է, աթաւէս լէ դմրաւիս

նստողները բան չը գիտեն, ձեռքէս առնեն սազս

<sup>1)</sup> Այս տողը ամեն նոր տողից ենտու կրկնում է.

Հեւառ կը կամաւորիք վանեցէք սիս աւես չէ խլաւիս  
անպէս բաներ ասացէք՝ զլիսից ելնէ միտքս  
Ակ մը կայէն և այլն:

## II

Ուստա, աւեմ դու դավիդ կետար ես պաշտաս  
—վարպետ, գամ մօտղ, ինչ ունիս հետս  
Սամիթ կարեմ ճարիս, բանթեմ կու դաստաս աս  
շինում եմ մարտ, կապում եմ տասը-տասը  
Պհու որով նայեմ նաբարիս պաշտաս  
շատ մեծ չեմ (որ) ընկնես հետս  
Լորեցիր իսա, մանուս ես մանուս  
դասր թէ որ<sup>2)</sup> մարդ ես մարդ:

Ուստա Վանօն պակրեց տերաւեն թաճլիս  
վարպետ Վանօն ասաց իրանից երդ (խաղ)  
Կամ նա ջան ես իսա նաև պէս ես մաճլիս  
բան չը զիտես եթէ չը մանես հանդէս  
Սոլաւնոց կանեմ կու սնանես կու զիս  
հներոց կ'անեմ (կը) ճանաչես կը ինձ  
Լորեցիր իսա մանուս ես, մանուս:  
դասր թէ որ՝ մարդ ես, մարդ,

<sup>2)</sup> Ալունքներ՝ թէ որ դասր հանելու կը.